ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Beeline 2015

Beeline®

Ընկերության մասին

Beeline-ը (ապրանքանիշը՝ Beeline) Հայաստանի խոշորագույն ինտեգրված հեռահաղորդակցության ընկերությունն է: Հիմնադրվել է 1995թ-ի մարտ ամսին ամերիկյան Trans World Telecom ընկերության հետ համատեղ: 2006թ-ի նոյեմբերի 3-ից աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկի՝ «ՎիմպելԿոմ Լթդ» Ընկերությունների խմբի մի մասն է:

Տվյալներ Ընկերության ծառայությունների մասին

1. GSM 900/1800 և 3G (UMTS) ստանդարտ շարժական կապ Հայաստանի ողջ տարածքում, ամրակցված հեռախոսակապի ծառայություններ
2. Ինտերնետի հասանելիություն CDMA, ADSL և FTTB տեխնոլոգիաներով
3. ՀՀ-ում 3G երրորդ սերնդի բջջային ցանցը շահագործած առաջին բջջային օպերատոր Beeline-ի 3G ցանցն ընդգրկում է Հայաստանի ավելի քան հարյուր հիսուն բնակավայր՝ 2,9 միլիոն բնակչությամբ
4. 1 Գբիթ/վրկ թողունակությամբ Beeline հուսալի CDN ենթակառուցվածք
5. 100% թվայնացված հեռախոսակապ Երևանում
6. 87 %-ը գերազանցող թվայնացման ցուցանիշ ՀՀ-ի ողջ տարածքում
7. Ավելի քան 8500 կմ երկարությամբ լարային ենթակառուցվածք

Տվյալներ Ընկերության ծառայությունների մասին

2015թ–ին Beeline–ն արժանացավ չորս պատվավոր մրցանակի, որոնք խորհրդանշում են տարվա ընթացքում ընկերության ունեցած ավանդն ու ձեռքբերումները տարբեր ոլորտներում:

Մասնավորապես, 2015թ–ի հոկտեմբեր ամսին Beeline–ն արժանացավ **«Լավագույն գին առաջարկող կապի օպերատոր»** կոչմանը **«Տարվա լավագույն հանրային ծառայող և տարվա լավագույն ապրանքանիշ»** հինգերորդ ամենամյա ազգային մրցանակաբաշխության շրջանակներում: Պատվավոր մրցանակը տրվեց **«Համազգային վստահություն»** խորհրդի կողմից՝ ֆիքսված, բջջային ու ինտերնետ կապի ոլորտում լավագույն գնով ծառայություններ առաջարկելու և սպասարկման որակի համար:

2015 թ.–ի դեկտեմբերի 11–ին Beeline–ն արժանացավ ԱՊՀ երկրների միջպետական մրցանակի և պարգևատրվեց ՀՀ Հեռահաղորդակցության ոլորտում զգալի ներդրում ունենալու համար: Մրցանակը տրվեց 2015 թ.–ին ապրանքների և ծառայության որակի ոլորտում ձեռքբերումների և միջազգային ստանդարտներին համապատասխան ծառայություններ մատուցելու համար ԱՊՀ անդամ երկրների ստանդարտացման չափագիտության և սերտիֆիկացիայի Միջպետական խորհրդի 48–րդ նիստի շրջանակում:

2015թ.–ի դեկտեմբերի 22–ին **«Վստահության վարկանիշ»** ամենամյա հետազոտության արդյունքներով Beeline–ը միաժամանակ արժանացավ երկու պատվավոր կոչման: Ընկերության Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը պարգևատրվեց **«Բիզնեսում բարձր պատասխանատվություն և հաճախորդների նկատմամբ հոգատար վերաբերմունք»** անվանակարգում, իսկ ընկերության Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավար Տաթև Այրումյանը՝ **«Ընկերության իմիջի կայուն զարգացմանն ուղղված արդյունավետ և նորարար PR գործունեություն»** անվանակարգում:

Beeline-ի ձեռքբերումները 2015 թ-ին

- Լավագույն գին առաջարկող կապի օպերատոր
- Առաջատար ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում
- Սակագների նշանակալի նվազեցում
  - IPTV ինտերնետային հեռուստատեսություն. IPTV ծառայությունը հասանելի է Հայաստանի Beeline ֆիքսված կապի բաժանորդների գրեթե 80 %-ին
- 8.6 % աճ բջջային սեգմենտում 2014թ-ի համեմատ
  - Ավելի քան 843 000 բջջային կապի բաժանորդ
- 16.5 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում.
  - 2015թ-ի ներդրումների ծավալը 2.5մլն-ով գերազանցում է 2014թ-ի ներդրումները:
- 15 մլրդ. դրամը գերազանցող հարկային վճարումներ
- GSM եւ 3G ցանցերի բազային կայանների տեղադրում Հայաստանի ողջ տարածքով:
  - Տեղադրվել են 3G ցանցի 55 բազային կայաններ Հայաստանի ողջ տարածքով:
- FTTB տեխնոլոգիայով օպտիկամանրաթելային գերարագ ինտերնետ ծառայության գործարկում Երևանում
  - 2015 թ-ի ընթացքում լայնաշերտ գերարագ FTTB տեխնոլոգիայովապահովված շենքերի թիվը ավելացվել է 1738-ով(Երևան քաղաքում):
    Այսպիսով, FTTB-ով ապահովված շենքերի քանակը Հանրապետությունում, ընդհանուր առմամբ, դարձել է 2025:
- Հաճախորդների սպասարկման որակի ցուցանիշի (NPS) ռեկորդային աճ
  - Ցուցանիշը 2014 թ-ի 1-ին կիսամյակի համեմատ ավելացել է 13 %-ով
- Հայաստանի 9 բնակավայրերի հեռախոսային ցանցի թվայնացում.
  - Մոնտաժվել է ավելի քան 7700 հեռախոսագիծ և լայնաշերտ ինտերնետի ծառայությունների ավելի քան 2900 պորտ (11 նոր բնակավայր)
- Հայաստանի խոշոր հարկատուներից և գործատուներից մեկը
- Beeline-ն այսօր Հայաստանում ունի ամենախոշոր վաճառքի և սպասարկման գրասենյակների ցանցերից մեկը:

make your mark | helping young people shape their future

«Մենք իրականացրել ենք բազմաթիվ ծրագրեր այս նախաձեռնության շրջանակում: Կարևոր է այն փաստը, որ մենք ստեղծում ենք նոր հնարավորություններ աճող սերնդի զարգացման համար, ովքեր այսօր արդեն իսկ կստանան մասնագիտական հմտություններ, իսկ հետագայում կդառնան իրենց գործի վարպետներ և վաղվա օրվա կերտողներ: Մեր և հետաքրքրություն սերմանելով երիտասարդների մեջ՝ մենք կնպաստենք երիտասարդների կարողությունների զարգացմանը, կխթանենք իրենց փոքր բիզնեսի վարման և եկամտի ստեղծման գործընթացին», - նշեց Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը:

Make your mark/ Թո՛ղ քո հետքը

2015թ–ին «ՎիմպելԿոմ»–ը որդեգրեց Make your mark/ Թո՛ղ քո հետքը գլոբալ սոցիալական ռազմավարություն, որը հանդիսանում է ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առանցքային բաղադրիչը և նպատակ ունի «Օգնել երիտասարդներին կառուցել իրենց ապագան»: Ռազմավարության շրջանակում ընկերությունը տրամադրում է երիտասարդներին տեխնոլոգիական գործիքներ, աջակցություն, ուղղորդում, որոշ դեպքերում բազային կրթության հնարավորություն՝ օգնելով նրանց հաղթահարել խոչընդոտներն ու դժվարությունները և կերտել իրենց ապագան:

Make your mark/ Թո՛ղ քո հետքը

«Make Your Mark» ծրագիրը բացկացած է 3 հիմանական ուղղություններից.

- Աջակցել կրթություն ստանալու հնարավորությունից զրկված երիտասարդներին բարելավելու իրենց կյանքը
- Աջակցել երիտասարդ ձեռներեցներին իրականություն դարձնել իրենց գաղափարները օգտագործելով բջջային տեխնոլոգիաները: Ստեղծել նոր թվային բիզնեսներ՝ օգնելով երիտասարդներին,նրանց համայնքներին և զարգացնելով տվյալ տարածաշրջանի տնտեսությունը:
- Ոգեշնչել երիտասարդներին օգտագործել իրենց էներգիան, ստեղծագործական և բիզնես գաղափարները հասարակության մարտահրավերները հաղթահարելու նպատակով

Make your mark/ Թո՛ղ քո հետքը

«Make Your Mark» նախաձեռնության միջոցով Ընկերությունը նպատակ ունի էլ ավելի ընդլայնելու և զարգացնելու բոլոր այն սոցիալական ծրագրերն, որոնք արդեն իսկ իրականացվում են՝ նպատակ ունենալով խթանել նորարարությունն ու տեխնոլոգիական ձեռներեցության զարգացումը:

2015թ–ի Make your mark գլոբալ սոցիալական ռազմավարության շրջանակում անց են կացվել հետևյալ խոշոր ծրագրերը.

«Ագրո դպրոց» ծրագիր

«Eurasia Mobile Challenge» մրցույթ

«ՀՀ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացում» ծրագիր

Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը

Որպես Հայաստանի խոշորագույն հեռահաղորդակցության ինտեգրված օպերատոր և սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ Beeline-ը շարունակական աջակցություն է ցուցաբերում հասարակությունում առկա տարբեր խնդիրների լուծմանը՝ իր ներդրումն ունենալով բարեկեցիկ ապագայի կերտման գործում: Ընկերությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ռազմավարությունն իրականացնում է **«Beeline-ն օգնում է մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը»** և **«Օգնել երիտասարդներին կառուցել իրենց ապագան»** խորագրերի ներքո:

ԿՍՊ նշանակալի ուղղությունները սահմանելու համար Beeline-ն ուսումնասիրում է հասարակական պահանջները հաղորդակցվում է առաջնորդների, պետական ներկայացուցիչների հետ՝ երկրում առաջնահերթ և հրատապ սոցիալական հարցերի լուծման մեջ իր ներդրումն ունենալու համար: Սոցիալական ռազմավարության իրականացման հարցում Beeline-ը հավատարիմ է ընտրված ուղղություններին, իսկ սոցիալապես պատասխանատու մոտեցումը ընդգրված է ընկերության բիզնես գործընթացներում:

2015 թ-ին Beeline-ն իր սոցիալական ծրագրերն իրականացրել է ողջ ՀՀ տարածքում: Շարունակական աշխատանքի արդյունքում մենք ձեռք ենք բերել մեկ կարևոր հմտություն. իրականություն դարձնել մեր գաղափարները և հասնել լավագույն արդյունքների, իսկ յուրաքանչյուր աշխատակցի, հաճախորդի և շուկայում առկա գործընկերների հանդեպ ազնիվ և արդար վերաբերմունքը դարձել է մեր հաջողության երաշխիքը:

ԿՍՊ հաշվետվության մասին

Հաշվետվությունը ընթերցողին ծանոթացնում է Beeline–ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությանը, դրա առանցքային ուղղություններին և 2015թ–ին իրականացված նախագծերին՝ ներկայացնելով դրանց արդյունավետությունն առկա խնդիրների լուծման գործում:

Հաշվետվությունը նպատակ ունի ապահովելու թափանցիկություն Ընկերության բիզնես գործընթացների, հասարակական գործողությունների և շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության սկզբունքների վերաբերյալ:

ԿՍՊ հաշվետվության մասին

2015թ-ի Beeline ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններն են՝

1. Beeline կրթական ծրագրերը՝ հանուն բարեկեցության

2. Պայծառ ապագա երեխաների համար

3. Մշակույթը և կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը

4. Շրջակա միջավայրի պահպանման ծրագրեր

5. Տեղեկատվական տեխնոլոգիաներ

6.Make your mark/ Թող քո հետքը

01

Beeline կրթական ծրագրերը՝ հանուն բարեկեցության

Ստեղծագործական ներուժի բացահայտում

Ներառական կրթության խթանում

Դասախոսություններ տարբեր կրթական հաստատություններում

Բարձր տեխնոլոգիաները կրթական ոլորտում

Beeline կրթական ծրագրերը՝ հանուն բարեկեցության

Ստեղծագործական ներուժի բացահայտում

2015թ.–ին Beeline ի աջակցությամբ արդիականացվել է Գաֆեսճեան արվեստի կենտրոնի Ինտերակտիվ ուսումնական կենտրոնը: Այն համալրվել է ժամանակակից թվային տեխնոլոգիաներով, ինչը հնարավորություն է ընձեռել այցելուների համար հասանելի դարձնել աշխարհի խոշոր թանգարանների և արվեստի կենտրոնների թվայնացված հավաքածուները և տվյալների բազաների առցանց շտեմարանները:

Beeline-ը նաև շարունակել է աջակցել Գաֆեսճեան արվեստի կենտրոնի կողմից կազմակերպված կրթական ծրագրերին: Իրականացված ծրագրերի շրջանակում ավելի քան 2400 երեխա մասնակցել է կրթական միջոցառումներին և մոտ 3000 այցելու օգտվել է ԳՄԿ-ի Ինտերակտիվ ուսումնական կենտրոնից:

Կրթական ծրագրերի մասնակիցները ծանոթացել են արվեստի և ճարտարապետության տարբեր ուղղություններին և վերջիններիս պատմությանը, ինչպես նաև հնարավորություն ստացել կենտրոնի մասնագետների աջակցությամբ ստեղծել իրենց սեփական աշխատանքները:

Beeline կրթական ծրագրերը՝ հանուն բարեկեցության

Ներառական կրթության խթանում

1 «Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագրի միջոցով Beeline-ը նպաստում է ներառական կրթության զարգացմանը Հայաստանում՝ կարևորելով համապատասխան ուսումնական պայմանների ապահովման, մասնագետների վերապատրաստման և ներառական կրթության որակի բարձրացման դերը հատուկ կարիքներով երեխաների մտավոր ներուժի զարգացման գործում:

2 2015 թ.-ին Արագածոտնի և Վայոցի Ձորի 4 կրթական հաստատությունում ստեղծվել են երեխաների զարգացման Beeline անկյուններ, ինչպես նաև ներառական կրթությամբ զբաղվող մասնագետներն անցել են հատուկ վերապատրաստում ներառական կրթության էության, այն զարգացնող խաղերի ու նյութերի, ինչպես նաև զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում նորարարական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ:

3 Ներառական կրթության զարգացմանն է ուղղված նաև «Սովորենք Միասին» ծրագիրը, որի շրջանակում 16-25 տարեկան հատուկ կարիք ունեցող շուրջ 20 երիտասարդ շաբաթական 2 օր անց են կացրել «Մայրի» ՀԿ արհեստագործական կենտրոնում, ստացել հատուկ մանկավարժի և հոգեբանի ծառայություններ՝ բացահայտելով այն նախասիրություններն ու կարողությունները, որոնք հետագայում նրանց կօգնեն իրենց զգալ առավել լիարժեք և արագ կայանալ հասարակության մեջ:

Ներառական կրթության խթանում

4 Նախորդ տարում ծրագրի շրջանակներն ընդլայնվեցին՝ հնարավորություն տալով օգտագործել թվային տեխնոլոգիաները ներառական կրթության զարգացման գործում: Մշակվել է երեխաների տրամաբանությունը զարգացնող 2 խաղ–հավելված. «Our Day»–ը առաջին հայալեզու զարգացնող խաղ–հավելվածն է՝ ստեղծված 5–7 տարեկան երեխաների համար իսկ «Let's think» տրամաբանական խաղը նախատեսված է դպրոցահասակ երեխաների համար և ուղղված է երեխայի տրամաբանության զարգացմանն ու քննադատական մտածողության զարգացմանը:

5 «Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագրի շրջանակում հիմնվել է «Հաջողակների ակումբ» Երևանում: Ակումբի մասնակից 14–17 տարեկան երիտասարդների համար պարբերաբար անց են կացվում հատուկ հանդիպումներ և դասընթացներ, որոնց ընթացքում քննարկվում են հաջողակ դառնալու հնարավորությունները, հաջողության հասնելու տարբեր մոտեցումները, ինքնաճանաչման և ինքնադրսևորման հնարավորությունները:

6 Ծրագրի շրջանակում գործարկվել է նաև «0–8000–1007» վստահության հեռախոսագիծը, որին կարող են զանգահարել բոլոր նրանք, ովքեր ունեն երեխաներին առնչվող հարցեր խորհրդատվության կամ մասնագիտական աջակցության կարիք: Նախաձեռնությունը նպատակ ունի նաև արագ տեղեկատվություն տրամադրելու և արձագանքելու միջոցով խթանել երեխաների իրավունքների պաշտպանության գործընթացը:

Beeline կրթական ծրագրերը՝ հանուն բարեկեցության

Դասախոսություններ տարբեր կրթական հաստատություններում

Կարևորելով կրթության գործում փորձի փոխանակումը երիտասարդ սերնդի հետ՝ Beeline-ը 2015 թ.-ին մի շարք բուհերում և կրթական հաստատություններում կազմակերպեց դասախոսություններ և հանդիպումներ ուսանողների և տարբեր ոլորտների մասնագետների հետ: Ընկերության Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը հանդես եկավ բիզնեսի գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու հատուկ դասախոսություններով.

«Արդյունավետ կառավարման մոդելները» թեմայով բաց դաս երիտասարդ հետազոտողների «Մերգելյան» ակումբում

«Հաջողության ճանապարհը» խորագիրը կրող հատուկ դասախոսություն «Սգրո դպրոց» ծրագրի մասնակիցների համար

«Նոր հորիզոններ» թեմայով բաց դաս Առաջնորդության Դպրոցում

«Ինչպես կառավարել ղեկավարին» թեմայով դասախոսություն Երևանի Պետական Համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետին կից հեռաուսուցման լաբորատորիայի՝ Մարքեթինգի և Հասարակայության հետ կապերի ոլորտում վերապատրաստման հատուկ դասընթացի մասնակիցների համար

«Աշխատանք մեծ ընկերությունում Beeline-ի օրինակով» թեմայով բիզնես-դասընթաց Երևանի թիվ 112 ավագ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների համար

Beeline կրթական ծրագրերը՝ հանուն բարեկեցության

Բարձր տեխնոլոգիաները կրթական ոլորտում

2015 թ. Beeline-ի աջակցությամբ «Նունե Եսայան» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնական կենտրոնում բացվել է համակարգչային դասարան՝ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության զարգացման համար բազմաթիվ նոր հեռանկարներ բացելով աշակերտների համար: Համագործակցության շրջանակում ընկերությունը նաև բարձր առաջադիմություն ցուցաբերող աշակերտներին խրախուսելու նպատակով նվիրել է պլանշետներ և հեռախոսներ:

02

Make your mark/ Թող քո հետքը

«Մենք ստեղծում ենք նոր հնարավորություններ աճող սերնդի զարգացման համար, ովքեր այսօր արդեն իսկ կստանան մասնագիտական հմտություններ, իսկ հետագայում կդառնան իրենց գործի վարպետներ և վաղվա օրվա կերտողներ: Մեր և հետաքրքրություն սերմանելով երիտասարդների մեջ՝ մենք կնպաստենք երիտասարդների կարողությունների զարգացմանը, կխթանենք իրենց փոքր բիզնեսի վարման և եկամտի ստեղծման գործընթացին» ,- նշեց Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը:

«Eurasia Mobile Challenge»

Աջակցություն երիտասարդ մասնագետներին

«Սգրո դպրոց» ծրագիր

«Eurasia Mobile Challenge»

2015 թ.-ին Beeline ը Հայաստանում միացավ «ՎիմպելԿոմ» ընկերությունների խմբի կողմից անցկացվող «Eurasia Mobile Challenge» միջազգային մրցույթին: Մրցույթի նպատակն էր ողջ Եվրասիայից ներգրավել երիտասարդներ բջջային տեխնոլոգիաների ոլորտում հերթական նշանակալի լուծումը ստեղծելու համար: Մրցույթին մասնակցել են ներկայացուցիչներ Հայաստանից, Վրաստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից և Ուզբեկստանից:

Յուրաքանչյուր մասնակցի հիմնական խնդիրն էր մշակել մի յուրահատուկ և նորարարական հավելված կամ առաջարկեն մի համակարգ, որը հնարավորություն կտա հաղթահարել իրենց երկրում առաջացած ինչ-որ խնդիր, որի հետ հաճախ են բախվում տվյալ երկրի օգտատերերը:

«Eurasia Mobile Challenge»

«Eurasia Mobile Challenge» մրցույթի հայաստանյան փուլին գրանցվել է երիտասարդ ձեռներեցների 54 թիմ: Թիմերը գնահատվել են տեղական և միջազգային փորձագետների, ինչպես նաև «ՎիմպելԿոմ»-ի ղեկավարների կողմից հետևյալ չափանիշներով՝ նորարարություն, տվյալ համայնքի համար արդիականություն, մասշտաբայնություն, յուրօրինակություն, բիզնես մոդելի իրագործելիություն: Առաջին փուլի արդյունքնում ընտրված երեք հայաստանյան թիմ հնարավորություն ստացան մասնակցելու և իրենց գաղափարները ներկայացնելու Մոսկվայում կայացած տարածաշրջանային կիսաեզրափակիչին:

«Աշխարհն օրեցօր դառնում է ավելի ու ավելի թվային և հաճախորդամետ, իսկ նորարարությունները և զարգացման գործընթացը հաճախ չի լինում այնքան արագ որքան մենք կցանկանայինք Այս մրցույթի նպատակն է նպաստել ձեռներեցության էկոհամակարգի զարգացմանը՝ ապագայի ձևավորման կոմերցիոն հնարավորությունների ստեղծման համար երիտասարդությանն ազգային, տեղական և պոտենցիալ գլոբալ հարթակ տրամադրելու միջոցով»,- նշեց «ՎիմպելԿոմ»-ի Գլխավոր տեխնիկական տնօրեն Յոգեշ Մալիկը:

Աջակցություն երիտասարդ մասնագետներին

2015 թ.-ին Beeline-ի աջակցությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է երիտասարդների շրջանում խթանել բիզնես պլան կազմելու և կարիերան պլանավորելու, սեփական բիզնեսը հիմնելու և վարելու գործընթացը, բարձրացնել մրցունակությունն աշխատաշուկայում, ինչպես նաև նպաստել աշխատանքային միգրացիայի կանխարգելմանը և զբաղվածության խթանմանը

«ՀՀ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացում» խորագրով ծրագրի շրջանակում ավելի քան 350 ավագ դպրոցի աշակերտներ և ուսանողներ Երևանից և մարզերից «Կարիերայի պլանավորման Ճանապարհին» թրեյնինգ-դասընթացի ընթացքում ստացան ամբողջական գիտելիքներ և հմտություններ գրագետ ինքնակենսագրական գրելու, աշխատաշուկայում համապատասխան աշխատանք գտնելու և հարցազրույցին պատշաճ ներկայանալու մասին:

Ծրագրի երկրորդ փուլին, որի ընթացքում ընտրվեցին 70 ակտիվ, նախաձեռնող և բիզնես գաղափարներ ունեցող երիտասարդներ մասնակցեցին հատուկ մասնագիտական երկօրյա դասընթացին «Ինչպե՞ս սկսել սեփական բիզնեսը Հայաստանում» թեմայով: Ծրագրի վերջին փուլում ոլորտի մասնագետների կողմից անհրաժեշտ խորհրդատվության միջոցով ներկայացված ծրագրերը կատարելագործելուց հետո, լավագույն 20 բիզնես նախագծերի հեղինակները ՀԳՀՄ և Հայաստանում Beeline-ի աջակցությամբ հիմնադրեցին իրենց սեփական բիզնեսը:

Ընկերության աջակցությամբ Հայաստանի գործատուների հանրապետական միությունն անցկացրեց Սոցիալական գործընկերության 6-րդ ազգային կոնֆերանսը, որի նպատակն էր խթանել եռակողմ սոցիալական գործընկերությունը և սոցիալական երկխոսությունը ՀՀ-ում պետական մարմինների, աշխատողների և գործատուների միջև՝ կայուն աշխատաշուկայի ձևավորման համար:

«Մգրո դպրոց» ծրագիր

2015 թ.–ին Beeline–ի կորպորատիվ սոցիալական ռազմավարության առանցքային մասն են կազմել այն ծրագրերը, որոնք ուղղված են թվային տեխնոլոգիաների օգնությամբ ձեռներեցության զարգացմանը: Նման ծրագրերից էր Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) հետ համատեղ «Մգրո դպրոց» ծրագիրը, որի նպատակն է թվային տեխնոլոգիաների միջոցով լուծել կրթական, արտագաղթի և սոցիալական խնդիրները Հայաստանի գյուղական համայնքներում:

«Մգրո դպրոց» ծրագիրն իրականացվում էր չորս հիմնական փուլով. առաջինն ուսումնական ծրագրի մշակումը և ջերմատան կառուցումն էր, զուգահեռ իրականացվում էր լսարանային և գործնական ուսուցում: Երրորդ փուլը փորձի փոխանակումն էր այլ համայնքների ավագ դպրոցի աշակերտների հետ, և վերջին քայլը առցանց հարթակի միջոցով ստացված արտադրանքի շուկայավարումն էր և վաճառքը:

Ծրագիրը հնարավորություն ընձեռեց Արմավիրի մարզի Գետաշեն և շրջակա երեք համայնքների շուրջ 235 ավագ դպրոցականների ծանոթանալ ֆերմերային գործունեության վերջին նորություններին, ճիշտ գնահատել դաշտը, մրցունակ արտադրանք ունենալ և կարողանալ լավագույնս ներկայացնել արտադրանքը շուկայում՝ օգտագործելով մարքեթինգային միջազգային լավագույն փորձը և ժամանակակից տեխնոլոգիաները:

03

Թվային հասարակության զարգացում

«Հայ երիտասարդներն իրոք տաղանդավոր են և այսօր մենք տեսնում ենք դրա վառ օրինակը. նրանք փորձում են իրենց սեփական ջանքերով և աշխատանքով կերտել իրենց ապագայի կանաչ ճանապարհը, առավել քան համոզված եմ, որ նրանցից շատերը դառնալու են հաջող ձեռնարկատերեր և իրենց լուման են ներդնելու երկրի տնտեսության զարգացման գործընթացում: Beeline-ն իր հերթին մշտապես կաջակցի տաղանդավոր երիտասարդներին՝ ընձեռելով հնարավորություն հասնել ավելիին, նվաճել նորանոր բարձունքներ և կօգնի նրանց կյանքը դարձնել էլ ավելի լավը», - նշել է Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախինը:

«Դիջիքեմփ» ձեռներեցության ճամբար

«Հեքքթոն [ՅՄՍ] մանկություն 2015»

App Armenia համակարգը՝ 2015 թ. Հայաստանում
ներբեռնումների թվով առաջատարների թվում

«Դիջիքեմփ» ձեռներեցության ճամբար

2015 թ. Beeline-ի հովանավորությամբ կայացավ «Դիջիքեմփ» ձեռներեցության 3-րդ ամենամյա ճամբարը՝ կազմակերպված Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) կողմից: Ճամբարի հիմնական նպատակն է տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող երիտասարդներին համախմբելը, մոտիվացիոն և կրթական միջավայր ստեղծելը, ճամբարի երիտասարդ մասնակիցներին ոգեշնչելը՝ ստեղծելու սեփական բիզնես և իրագործելու սեփական ծրագրերը

«Դիջիքեմփ» ճամբարին մասնակցել է 50 երիտասարդ: Ճամբարի մասնակիցները հնարավորություն ունեցան կատարելագործելու իրենց նախագծերը՝ փորձագետների խորհրդվատության, գործարարների և թիմային աշխատանքի շնորհիվ: Հանձնաժողովի որոշմամբ հաղթող է ճանաչվել երեք թիմ, որոնք արժանացան մրցանակների Beeline-ի և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից: Ճամբարի բոլոր մասնակիցներին հանձնվել են Դիջիքամփ 2015թ.-ի հավաստագրեր:

«Հեքքթոն [ՅՄՆ] մանկություն 2015»

2015 թ. երիտասարդների շրջանում տեխնոլոգիական ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերից է **«Հեքքթոն [ՅՄՆ] մանկություն 2015»** նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի, Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Մայքրոսոֆթ Մրէյ-ի, Հանրային լրագրության ակումբի, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի և Beeline-ի համագործակցությամբ:

Մրցույթի ավելի քան 250 մասնակից հնարավորություն ստացավ մասնակցել տարբեր տեխնոլոգիաների վերաբերյալ սեմինարների, ինչպես նաև ծանոթանալ հայաստանյան կայացած ստարտափերի հիմնադիրների հաջողության պատմություններին: Լավագույն թիմերը, ովքեր ներկայացրել են տարբեր ոլորտների փոքր բիզնեսների առօրյան հեշտացնող գաղափարներ և լուծումներ, արժանացան Beeline-ի կողմից հատուկ մրցանակների, դրամական մրցանակի Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի կողմից, ինչպես նաև կենտրոնի ռեսուրսներից օգտվելու հնարավորություն՝ իրենց գաղափարը կյանքի կոչելու համար:

App Armenia համակարգը՝ 2015 թ. Հայաստանում ներբեռնումների թվով առաջատարների թվում

2015 թ.-ին Beeline-ի և Տեխնոլոգիական Զարգացման Կենտրոնի կողմից համատեղ մշակված App Armenia բջջային հավելվածը App Store և Google Play մարքեթներում Հայաստանում ներբեռնումների թվով առաջատարների թվում էր:

App Armenia-ն բջջային հավելվածների և մոբայլ նախագծերի համար նախատեսված հարթակ է՝ բաղկացած Web և Mobile մասերից: App.am կայքում օգտատերերը կարող են ընձեռում գրանցվել և ստեղծված էջում ներկայացնել սեփական պաստառները կամ ձայնային ֆայլերը, իսկ բջջային հավելվածի միջոցով՝ իրենց սմարթֆոններում օգտագործել App.am կայքի ամբողջ բովանդակությունը: App.am կայքում հրապարակվում են նաև բջջային հավելվածների մասին նորություններ և նյութեր:

Կես տարվա ընթացքում հավելվածը App Store և Google Play մարքեթներից ներբեռնվել է ավելի քան 17000 անգամ: Նույն ժամանակահատվածում ներբեռնվել է 31 000 այլ հավելված, 35000 պաստառ 45000 ձայնային և 15000 ազդանշանային ֆայլ:

04

Մշակույթը և կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը

«Մշակույթն այն հզոր գործիքն է, որի միջոցով մեր երկիրի անունը հնարավոր է առավելագույնս հասանելի ձևով ներկայացնել լայն հանրությանը: Ուրախ ենք, որ մեր կողմից իրականացված ծրագրերը կարողանում են շարունակել մշակութային զարգացմանն ուղղված մեր առաքելությունը» ,– նշեց Հայաստանում Beeline–ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախինը

- Beeline-ը՝ Բրիտանական ֆիլմերի 13-րդ փառատոնի հովանավոր
- Դասական երաժշտության զարգացում
- «Երաժշտություն հանուն փոփոխությունների» Փառատոն
- Աջակցություն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին
- Աջակցություն պատմամշակույթային ժառանգության պահպանմանը

Beeline-ը՝ Բրիտանական ֆիլմերի 13-րդ փառատոնի հովանավոր

Beeline-ը հերթական անգամ հանդես եկավ որպես Բրիտանական ֆիլմերի փառատոնի գլխավոր հովանավոր՝ նպաստելով միջմշակութային կապերի հաստատմանն ու ընդլայնմանը:
Փառատոնի շրջանակում ցուցադրվեց 7 ֆիլմ Երևանում, Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերի տարբեր քաղաքներում: Ցուցադրությունները հյուրընկալեցին ավելի քան 8000 հանդիսատեսի:
Բրիտանակ ֆիլմերի 13-րդ փառատոնը նվիրված էր սիրո տարածման ու պահպանման գաղափարին: Փառատոնի շրջանակում անցկացվեց 2 մրցույթ նվիրված սիրո թեմային.

«Սիրո լավագույն հաղորդագրություն» խորագրով մրցույթի շրջանակում մասնակցիների աշխատանքները հրապարկվեցին Facebook սոցիալական ցանցում՝ Beeline Armenia էջում: Հաղթող ճանաչվեցին առավելագույն քվե հավաքած երեք մասնակիցները: Մրցույթի հաղթողները Beeline-ի կողմից որպես մրցանակ ստացան Beeline Smart հեռախոս, ԵՒս երեք մասնակից արժանացան խրախուսական մրցանակների Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի կողմից:

Beeline-ը՝ Բրիտանական ֆիլմերի 13-րդ փառատոնի հովանավոր

«Միրո ուժը» լուսանկարների մրցույթի շրջանակում մասնակիցների աշխատանքները հրապարկվեցին Facebook սոցիալական ցանցում՝ Բրիտանական խորհրդի էջում Մրցույթի հաղթողները հրավիրվեցին հատուկ ընդունելության Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանի նստավայր, իսկ նրանց ներկայացրած լուսանկարներով թողարկվեցին սահմանափակ քանակությամբ շապիկներ, որոնք տրամադրվեցին հեղինակներին: Եվս մեկ մասնակից Beeline-ի կողմից արժանացավ խրախուսական մրցանակի

Դասական երաժշտության զարգացում

Կարևորելով դասական երաժշտության դերը երկրի մշակութային ներուժի զարգացման գործում՝ Beeline-ը շարունակում է աջակցել «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամին և Էդուարդ Միրզոյանի անվան լարային քառյակին:

«Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամը ստեղծվել է Ա. Խաչատրյանի անվան եռյակի երաժիշտների կողմից 2010թ.-ին: Հիմնադրամի հիմնական գործունեությունն ուղղված է կրթական և բարեգործական ծրագրերի իրականացմանը դասական երաժշտության ոլորտում: Beeline-ը հանդիսանում է Հիմնադրամի մշտական գործընկերը 2011թ-ից ի վեր: 2014 թ. ընթացքում համագործակցության շրջանակում իրականացվել է 70 համերգ և 25 վարպետության դաս՝ ուղված դասական երաժշտության տարածմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Եռյակի համերգներին այցելել են ավելի քան 15.000 հանդիսատես, իսկ վարպետության դասերին երաժշտական դպրոցների և բուհերի 150-ից ավել աշակերտ և ուսանող:

Էդուարդ Միրզոյանի անվան լարային քառյակի գործունեության ընթացքում երաժիշտները հաջողություններ են հասել բազմաթիվ միջազգային մրցույթներում և դարձել են հայտնի ոչ միայն մեր երկրում, այլ նաև ողջ աշխարհում: Երաժիշտներից յուրաքանչյուրն արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգևների և ըստ արժանվույն է ներկայացրել հայրենիքը համաշխարհային բեմերում միջազգային համերգների ժամանակ:

Beeline-ի աջակցությամբ Քառյակը համեգային շրջագայություններ ունեցավ Հայաստանում և արտերկրում, ինչպես նաև անցկացվեց բարեգործական համերգներ անապահով ընտանիքների և Հայաստանի մանկատների երեխաների համար:

Երաժշտություն հանուն փոփոխությունների» Փառատոն

Beeline-ի աջակցությամբ նաև կայացավ Բեստ Վեստեռն Կոնգրես հյուրանոցի և Առաջնորդության Դպրոցի կողմից կազմակերպված «Երաժշտություն հանուն փոփոխությունների» Փառատոնը, որի նպատակն էր նպաստել Հայաստանում դասական երաժշտության տարածմանը, երիտասարդության շրջանում կարևոր մշակութային արժեքների ամրապնդմանն, ինչպես նաև շնորհալի երիտասարդների և բիզնես ընկերությունների միջև կապի ստեղծմանը: Երևան քաղաքի 10 լավագույն դպրոցները ներկայացնող մասնակիցներին գնահատեց պրոֆեսիոնալ հանձնաժողովը: Հաղթողները Beeline կողմից պարգևատրվեցին պլանշետներով, ինչպես նաև Կոմիտասի տուն-թանգարան ինստիտուտի կողմից ստացան հնարավորություն՝ իրենց համերգն անվճար կազմակերպել տուն-թանգարանի դահլիճում:

Աջակցություն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին

2015 թ.–ին Beeline–նն աջակցեց Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցին նվիրված մի շարք միջոցառումների: Ընկերության աջակցությամբ Մոսկվայի Փարաջանովի անվան գեղարվեստական թատրոնը Երևանում ցուցադրեց «Արմենիադա» բեմադրությունը: Բեմադրությունը Հայաստանը և հայոց պատմությունը ներկայացրեց ու մեկնաբանեց նորովի՝ յուրահատուկ գեղարվեստական լուծումների, դերասանական խաղի, պոեզիայի և կենդանի երաժշտության միջոցով:

Beeline–ի և «Համազգային վստահություն» խորհուրդի համագործակցության շրջանակում Հայոց ցեղասպանության հարյուրամյակին նվիրված «Հիշում եմ և պահանջում» խորագրի ներքո անցկացվող միջոցառումների շրջանակում ցուցադրվեց «Կոմիտաս. Կարոտի կռունկ» ֆիլմ ներկայացումը: Ֆիլմի ցուցադրությունից հետո տեղի ունեցավ Գրիգոր Տեր–Ավագյանի նկարների ցուցահանդես–վաճառքը՝ «Հայաստանը հոգու աչքերով» խորագրով: Ցուցահանդեսի նպատակն էր ևս մեկ անգամ աշխարհին ցույց տալ հայ միտքը, հայ մշակույթը, խոսքն ու ձեռագիրը:

Աջակցություն պատմամշակույթային ժառանգության պահպանմանը

«Այսօր առանց թվային տեխնոլոգիաների կիրառման և թվային ռեսուրսների ստեղծման հնարավոր չէ պատկերացնել գրավոր ժառանգության պահպանման արդի համակարգը: Անփոխարինելի է Մատենադարանի դերն ու նշանակությունը երկրի գիտական մտքի զարգացման, ինչպես նաև պատմամշակույթային ժառանգության պահպանման ու փոխանցման գործում: Առավել քան համոզված եմ, որ այս ծրագրի օգնությամբ Beeline-ին կհաջողվի մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը և աշխարհի ցանկացած անկյունում գտնվող մարդու հասանելի դարձնել այս կարևոր փաստաթղթերը և ձեռագրերը»,- նշեց Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը:

Աջակցություն պատմամշակութային ժառանգության պահպանմանը

2015 թ.-ին մեկնարկեց Beeline-ի և Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի համագործակցությունը, որի շրջանակում թվայնացվեցին հին ձեռագրեր և փաստաթղթեր:

Հին ձեռագրերի թվայնացման շնորհիվ ընդլայնվեց գիտական տեղեկատվության տարածումը՝ հնարավորություն ընձեռելով գիտնականներին ազատ օգտվել այդ նութերից՝ անկախ նրանց գտնելու վայրից:

Ընկերության տրամադրած միջոցներն նաև ուղղվել են հարյուրավոր վնասված նմուշների վերականգնմանը, որից հետո տասնյակ ձեռագրեր թվայնացվել են և զետեղվել Մատենադարանի ներքին ցանցում:

05

Պայծառ ապագա երեխաների համար

Աջակցություն սահմանամերձ գյուղերի երեխաներին

Սմանորի հեքիաթ

Beeline-ը նպաստում է երեխաների առողջ
ապագայի կառուցմանը

Աջակցություն սահմանամերձ գյուղերի երեխաներին

Երեխաների պայծառ ապագայի կերտմանն ուղղված ծրագրերի շրջանակում սահմանամերձ գյուղերը մշտապես Beeline-ի ուշադրության կենտրոնում են:

2015 թ.-ին Beeline-ը «Հայրենիքի դարպասներ» սոցիալական հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացրեց «Սահմանամերձ գյուղերի երեխաները Թումոյում» ծրագիրը: Ծրագրի շրջանակում 6 ամիս շարունակ յուրաքանչյուր շաբաթ Տավուշի մարզի 12 սահմանամերձ գյուղերի երեխաներ այցելեցին Դիլիջանում գտնվող Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն: Ուսումնական կենտրոնում նրանք այցելեցին անիմացիայի, թվային մեդիայի, խաղերի և կայքերի ստեղծման վերաբերյալ դասընթացների, որոնցում ձեռք բերված նոր և ակտուալ գիտելիքները նոր հնարավորություններ կստեղծեն նրանց համար՝ կառուցելու իրենց ապագան և սեփական ուժերով փոխել կյանքը դեպի ավելի լավը:

Ծրագրի շրջանակում սահմանամերձ 6 գյուղերից 30 երեխաներ, ովքեր առաջին փուլում հաճախել էին Դիլիջանում գտնվող Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, նաև հնարավորություն ունեցան այցելելու Երևան, եղան մայրաքաղաքի տեսարժան վայրերում և պատմամշակութային թանգարաններում:

Պայծառ ապագա երեխաների համար

Ամանորի հեքիաթ

2015 թ.-ին Beeline-ը շարունակեց աջակցել «Նաղաշյան մանուկներ տան» սաներին՝ իրականություն դարձնելով նրանց Ամանորի երազանքը: «Նամակ Ձմեռ պապիկին» միջոցառման շրջանակում Beeline-ի աշխատակիցներն Ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինի գլխավորությամբ իրենց սեփական միջոցներով կազմակերպեցին ամանորյա միջոցառում՝ ուրախացնելով երեխաներին նվերներով, տոնական տորթով և քաղցրավենիքով:

Beeline-ը կենտրոնի սաների համար նաև ապահովում է Beeline Hi-Line ինտերնետով և IPTV ծառայությունով՝ նպաստելով կրթական ծրագրերի արդյունավետության և երեխաների համակարգչային գրագիտության բարձրացմանը:

Պայծառ ապագա երեխաների համար

Աջակցություն սահմանամերձ գյուղերի երեխաներին

2015 թ.–ին Beeline–ի աջակցությամբ իրականություն դարձավ նաև մեկ ծրագիր՝ ուղղված հատուկ կարիքներով երեխաների կյանքն ավելի լավ դարձնելուն: Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Beeline–ը Երևան Մոլի հետ համատեղ իրականացրեց «Դարձի՛ր հրեշտակ՝ օգնի՛ր պայքարել» բարեգործական ծրագիրը՝ ուղղված շարժողական խնդիրներ ունեցող երեխաների առողջության բարելավմանը: Բարեգործական ակցիայի շրջանակում Երևան Մոլի հարկի տակ գործող խանութներն իրենց մեկամսյա եկամտից տրամադրեցին որոշակի գումար՝ ուղղված շարժողական խնդիրներ ունեցող երեխաների առողջության բարելավմանը, իսկ Beeline–ը տրամադրեց իր որոշ ծառայությունների եկամտից ստացված 10%–ը: Ակցիային հնարավորություն ունեցան իրենց ներդրումն ունենալու նաև Beeline բաժանորդները՝ ուղարկելով ANGEL բառը 7733 կարճ համարին:

«Երեխաների պաշտպանության միջազգային օրը դա աշխարհի ամենապայծառ տոներից մեկն է: Յուրաքանչյուր երեխա երջանիկ և առողջ լինելու իրավունք ունի, ինչին կարելի է հասնել մեր բոլորի համատեղ ջանքերով: Հավատացած եմ, որ մենք կկարողանանք պարգևել մեր փոքրիկներին և նրանց ծնողներին դրական լիցքեր և լավատեսություն ապագայի հանդեպ, իսկ նման նախաձեռնությունները նրանց կյանքը կդարձնեն էլ ավելի լավը»,– նշեց Հայաստանում Beeline–ի Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավար Տաթև Այրումյանը:

06

Շրջակա միջավայրի պահպանման ծրագրեր

Հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի հանդեպ մեր բիզնեսի փիլիսոփայությունն է:

«Գյումրի 2.0» ծրագիր

Հրջակա Միջավայրի բարեկարգման աշխատանքներ

«Գյումրի 2.0» ծրագիր

Beeline-ն աջակցում է ոչ միայն կանաչ միջավայրի պահպանմանը, այլ նաև քաղաքային միջավայրն ավելի գեղեցիկ դարձնելուն:

2015 թ.-ին ընկերությունը «Երևան Փրոդաքշնս» ընկերության մեդիա հարթակ հանդիսացող ImYerevan.com կայքի հետ համատեղ իրականացրեց «Գյումրի 2.0» ծրագիրը: Ծրագրի շրջանակում Գյումրու չորս բնակելի շենքերի պատեր նոր շունչ ստացան՝ նկարազարդվելով քաղաքի վերածնունդը խորհրդանշող պատկերներով և դառնալով քաղաքի տեսարժան վայրերից թե Գյումրեցիների, և թե զբոսաշրջիկների համար:

«Գյումրի 2.0» ծրագիր

«Beeline-ը շարունակում է մարզերի զարգացմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրականացումը՝ կարևորելով հատկապես այն բնակավայրերը, որոնք առավելապես ունեն մեր ուշադրության կարիքը: Վստահ եմ՝ այս գունեղ պատկերները հաճելի անակնկալ դարձան ոչ միայն ծրագրում ընդգրկված շենքերի, այլև Գյումրու բոլոր բնակիչների համար՝ վառ գույներ հաղորդելով քաղաքին և դարձնելով կյանքն ավելի լավը», - նշեց Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը:

Շրջակա միջավայրի պահպանման ծրագրեր

Շրջակա Միջավայրի բարեկարգման աշխատանքներ

2011 թ.-ից ի վեր Ընկերությունում մեկնարկած «Էկո-օֆիս» նախագծի շրջանակում մենք հնարավորություն ենք փնտրում բնական պաշարների օգտագործման օպտիմալացման համար: Նախագծի շրջանակում իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պահպանմանը և բնական պաշարների ճիշտ օգտագործմանը:

2015թ.-ի ընթացքում Beeline-ի աշխատակիցները շարունակեցին մասնակցել համաքաղաքային շաբաթօրյակներին, բարեկարգման աշխատանքներ տարվեցն նաև Երևանի տարբեր թաղամասերում ու մարզերում գտնվող Ընկերության բոլոր շինությունների, անալոգային հեռախոսային կայանների, ինչպես նաև վաճառքի ու սպասարկման գրասենյակների շրջակայքում:

Beeline-ի բնապահպանական նախաձեռնություններն արժանացել են հասարակության բարձր գնահատականին: 2013 թ.-ին Beeline-ը ճանաչվեց որպես ամենապատասխանատու բնապահպանական կազմակերպություն՝ «Կանաչ տնտեսություն և կանաչ աշխատատեղեր» մրցույթի շրջանակներում, որն անցկացվում է ՀՀ Բնապահպանության նախարարության, ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության, Սիմիությունների միության և Հայաստանի գործատուների միության կողմից: 2014 թ.-ին Beeline-ը Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից ճանաչվեց որպես էկոլոգիապես ամենապատասխանատու ընկերություն և ստացավ հավաստագիր Հայաստանում «Կանաչ տնտեսության» խթանման, լավագույն փորձի, «կանաչ» ծրագրերի իրականացման և դրանց շարունակական աջակցման համար

Beeline®